

ԳԱԼՈՒԲՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔԸ

ԿԸ ՄԵԿՆԱՐԿԷ

ԽՕՍՔ ԱՌ

ՄՐՑԱՆԱԿԸ

ԽՕՍՔ ԱՌ

Այս ճգնաժամային շրջանին, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը աշխարհասփիւռ հայախօսներուն առիթը կ'ընծայէ հայերէնով արծարծելու այն հիմնահարցերը, որոնց դէմ յանդիման կը գտնուի մարդկութիւնը այսօր:

Պսակածել ժահրը կը ստիպէ որ միլիոնաւոր հայեր մեկուսանան, հեռու իրենց սիրելիներէն: Այս պայմաններուն, համացանցը եւ տարբեր ընկերային առցանց հարթակներ հաղորդակցութեան ազդեցիկ միջոցներ դարձած են: Շատեր կը դիմեն այս ձեւերուն՝ ստեղծելով արտայայտչական նոր մշակոյթ մը: Այս շրջարկին մէջ, Հայկական Բաժանմունքը կը յայտարարէ առցանց *լսա-տեսողական եւ գրական արտադրութեան մրցանակ մը՝ **ԽՕՍՔ ԱՌ***, հրաւիրելով բոլորը ստեղծելու նիւթեր, որոնք՝

*Առիթը կու տան մտածելու եւ խօսելու մարդկութեան վերաբերող **ժամանակակից հիմնահարցերու** մասին, որոնք անյապաղ կ'անդրադառնան նաեւ աշխարհասփիւռ հայուն վրայ. օրինակ՝ կենսոլորտի աղէտը, գաղթականներու ճգնաժամը, յարատեւ պատերազմները, ազգայնամոլութիւնը եւ ցեղապաշտութիւնը, անձնական տուեալներու շահագործումը, կրթութեան մարտահրաւերները, սեռային անհավասարութիւնը, դեկլարութեան խնդիրները, յեղափոխութիւնները, գաղափարական, ընկերային եւ փիլիսոփայական սկզբունքներու բախումները եւ այլն:*

Գրաւիչ եւ ստեղծագործ նիւթերը կրնան շատ ազդեցիկ միջոցներ ըլլալ կարելոր պատգամ մը տալու հասարակութեան, եւ անոնց մասնակից դարձնելու մարտահրաւերներու դէմ պայքարին: Ստեղծագործ նիւթերը կրնան նաեւ մղիչ ուժ մը ըլլալ հայերէնով կայանացնելու խորքային քննարկումներ:

Եթէ կ'ուզէք աշխարհին դիմել, ապա այս մրցանակը ատոր լաւագոյն առիթն է. Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը կը հրաւիրէ դիմողները ներկայացնելու **լսողական, տեսողական, գրաւոր**, կամ **գծանկարչական** նիւթեր, հայերէնով:

Ձեր նիւթերը ստեղծելու համար կրնաք մարդկութեան դիմագրաւած մարտահրաւերներէն որեւէ մեկուն անդրադառնալ, գործածելով ժամանակակից արտայայտչամիջոցներ:

Կրնաք, ձեր գործին ընդմէջէն, հետեւեալ հարցումներէն մեկուն կամ մի քանիին պատասխանել.

1. Ի՞նչ է մարդկութեան բարոյական եւ քաղաքացիական պատասխանատուութիւնը բնութեան հանդէպ: | Սփիւռք մը ինչպե՞ս կրնայ միասնաբար պայքարիլ բնապահպանական աղէտին դէմ: | Պսակածել ժահրին պարտադրած մարդկային մեկուսացումէն ի՞նչ դասեր կարելի է քաղել:
2. Ներկայի կրթական համակարգը (ուսուցիչները եւ տնօրէնները ներառեալ) երեխաները կը պատրաստե՞ 21-րդ դարու պահանջներուն:

3. Ի՞նչ է ղեկավարութիւնը: | Ղեկավարութեան տագնապ կ'այ աշխարհի մէջ, իսկ համայնքներու մէջ:
4. Կիները ի՞նչ մարտահրաւերներ կը դիմագրաւեն այսօր, համաշխարհային կամ համայնքային մակարդակի վրայ:
5. Գաղթականներու ճգնաժամը ինչպէ՞ս կարելի է դիմագրաւել:
6. Յեղափոխութիւնները իսկապէս կը փոխեն աշխարհը:
7. Ի՞նչ են մշակոյթ մը ֆուլքուրի վերածելու վտանգները: | Հայկական աշխարհին մէջ այսօր ի՞նչ է արուեստագետին դերը, եւ ի՞նչ պետք է ըլլայ:

Վերոնշեալները բանալի հարցադրումներ են որոնք կ'անդրադառնան համաշխարհային եւ համամարդկային խնդիրներու. եթէ ներշնչուած էք, բայց այլ տեսանկիւնէ կ'ուզէք արծարծել հիմնահարց մը, ազա՛տ գգացէք: Կրնաք նաեւ դիմել մեզի, ստանալու յատուկ փաստաթուղթ մը ուր կան շատ աւելի հարցումներ:

ՅԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ Է

- Ստեղծել իւրայատուկ շունչով, նորարար մօտեցումով եւ երեւակայութեամբ լեցուն գործեր, ձեր լսարանին տալու անմիջական պատգամ մը:
- Ըլլալ սրամիտ եւ օգտուիլ կատակելու արուեստէն:
- Ներառել պատգամ մը որ անկեղծօրէն կ'արծարծէ ներկայ ընկերային խնդիրներ:
- Աշխատանքները ներկայացնել հետեւեալ ձեւաչափերով՝
 - Համակարգչային գծանկարչութիւն (illustration) եւ տեսողական ձեւաւորում (graphic design) (ներառեալ շարանկար կամ երգիծանկար) – AI, PSD, JPG, PNG, կամ PDF ձեւաչափերով:
 - Տեսերիզ (մինչեւ 3 վայրկեան տեւողութեամբ) կամ GIF – MP4 + յղումը (գաղտնաբառը ներառեալ, եթէ կայ):
 - Լսողական (երաժշտութիւն, հանրային իրազեկումի ազդեր, ներկայացում, podcasts) – Soundcloud + այլ նմանատիպ հարթակներ:
 - Գրաւոր նիւթեր (ներառեալ blog-ներ, կարճ յօդուածներ, երգիծական գրութիւններ) – PDF ձեւաչափով:
 - Ստեղծագործ գրութիւններ (մինչեւ 10 էջ) – PDF ձեւաչափով:
- Գործածել WeTransfer կամ փոխանցումի այլ միջոց, եթէ ձեր առաքումները 25 MB-էն մեծ են:

ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ

- Չգործածել լեզու մը որ կրնայ մեկնաբանուիլ որպէս խտրական եւ վիրաւորական:
- Չներառել 18 տարեկանէն վար անձերու լուսանկարներ. պարտիք ունենալ ձեր գործերուն մէջ տեղ գտած անձերու հաւանութիւնը:
- Չխախտել հեղինակային իրաւունքները, եթէ օգտուած էք այլ աղբիւրներէ եւ ձեր աշխատանքին մէջ տեղ գտած են ուրիշներու գործեր:

ԱՒԵԼԻՆ

- Դիմեցէք վերոնշեալ որեւէ աշխատանքային ձեւաչափի, արտադրելու գործ մը որ կրնայ ուղղել *յստակ* եւ *ազդեցիկ* պատգամ մը, **հայերէնով:**

- Ձեր աշխատանքը յանձնել է առաջ կամ վերջ, չվարանիք հրապարակելու գանազան ընկերային ցանցերու վրայ, ստեղծելու վանդակակնիշեր (hashtags) հայերենով, փորձելով ներկայացնել ձեր գործը ուր որ կարելի է, լայն տարածում մը ապահովելու համար: Ձեր համաձայնութիւնը ամենի էտք, Հիմնարկութիւնը ի հարկին կրնայ նաեւ ձեր աշխատանքը ներկայացնել իր հարթակներուն վրայ:
- Եթէ հետաքրքրական գաղափարներ ունիք, բայց գանոնք իրականացնելու փորձառութիւնը կամ միջոցները կը պակսին, ձեր աշխատանքը ստեղծելու համար կրնաք դիմել ուրիշներու օգնութեան, կազմելով առցանց փոքր խմբակ մը: Իսկ եթէ այս մէկն ալ անկարելի է, գործածեցէք ձեր ձեռքին տակ եղած որեւէ միջոց, սկսեալ թուղթ-մատիտէն: Չմոռնաք դիմելու ձեր բջիջային հեռաձայնին անձայրածիր հնարաւորութիւններուն:

ԴԻՄՈՒՄԻ ՉՎՓՈՒՆԻՇԵՐ

- Դիմումը բաց է անհատներու կամ փոքր խմբակի մը (առաւելագոյնը 3 հոգի):
- Դիմողները կրնան ներկայացնել մէկէ աւելի գործեր, **պայմանով որ անոնք ըլլան տարբեր ձեւաչափի**. այսուհանդերձ, քանի մը աշխատանք ներկայացնողը մէկէ աւելի մրցանակ չի կրնար շահիլ:
- Տարիքային սահմանափակում չկայ. 18-էն վար դիմողները պարտին ներկայացնել Հիմնարկութեան տրամադրած ծնողական արտօնագիրը:
- Դիմումները բաց են բոլորին, առանց սահմանափակումի:
- Բոլոր դիմումները պէտք է ըլլան **հայերէն լեզուով**:

ԳՆԱՀԱՏՈՒՄԻ ՉՎՓՈՒՆԻՇԵՐ

- Նախատեսուած է 25 մրցանակ Սփիւռքէն, եւ 25 մրցանակ Հայաստանէն դիմողներու:
- Իւրաքանչիւր մրցանակառու (կամ խմբակ) պիտի ստանայ 500 տոլար:
- Դիմողին խնդրանքով, իր ինքնութիւնը կրնայ չհրապարակուիլ:
- Դիմումագիրը ներկայացնելէ ետք, հաստատական իմակ մը պիտի դրկուի բոլոր դիմողներուն:
- Դիմումները գնահատող յանձնաժողովը կազմուած է Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի անձնակազմի անդամներէն:
- Որոշումները պիտի հրապարակուին վերջնաժամկէտէն երկու շաբաթ ետք, այսինքն 22 յունիսէն սկսեալ:

ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԹԱՑՔԻՆ ՄԱՍԻՆ

- Դիմումները կրնան ներկայացուիլ անմիջապէս:
- **Դիմումի վերջնաժամկէտն է՝ 8 յունիս 2020:**
- Նիւթերը դրկել ArmCurrentIssuesPrize@gulbenkian.pt հասցէին, վերոնշեալ ձեւաչափերով (AI, PSD, JPG, PNG, MP4, PDF, Soundcloud):
- Իմակին **վերնագիրի տուփիկին մէջ գրել՝ Be Heard** կամ **Խօսք առ**
- **Իմակին մէջ ներառել հետեւեալ պարտադիր տեղեկութիւնները (այս բաժինը լատինատառ ամբողջացնել)**

1. Ծրագիրին անունը.

2. Դիմողին կամ խումբի ներկայացուցիչին տուեալները.

- Full name:
- Gender:
- Date of birth:
- Type of identification document(s):
- Country of identification document(s):
- Number(s) of identification document(s):
- Copy of the identification document(s): (անցագիրին պատճենը կցել իմակին)

3. Հաղորդակցութեան տուեալները (խմբային դիմումնագիրի պարագային, գրել խումբին բոլոր անդամներուն տուեալները).

- Address:
- City:
- Country:
- Landline telephone number:
- Cellphone number:
- Email address:

- Հիմնարկութիւնը ձեր անձնական տուեալները պիտի չբաժնէ ուրիշներու հետ:
- Հարցումներու պարագային դիմել՝ ArmCurrentIssuesPrize@gulbenkian.pt, կրնաք մեզի գրել հայերէնով, անգլերէնով, ֆրանսերէնով, սպաներէնով, թրքերէնով կամ արաբերէնով:

Անձնական տուեալներու պաշտպանութիւն

(Երրորդական օրէնսդրութիւնը կը պարտադրէ այս բաժինը ընդգրկել փաթեթին մէջ)

Անձնական տուեալներու գործածութեան միակ նպատակը պիտի ըլլայ գնահատել տուեալ նպաստի դիմումի ծրագիրը, որ պիտի կատարուի Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութեան (այսուհետեւ՝ ԳԿՀ) կողմէ: ԳԿՀ-ն պիտի ըլլայ երկրորդ մարմինը որ պիտի ունենայ տուեալներու գործածութեան իրաւունք:

Որեւէ ժամանակ, անհատը կրնայ խնդրել որ իրեն տրուի իր անձնական տուեալներու գործածութեան վերաբերեալ տեղեկութիւններ՝ գրաւոր նամակ մը յղելով հետեւեալ իմակի հասցէին՝ privacidade@gulbenkian.pt

Անհատին անձնական տուեալները պիտի պահուին այնքան ժամանակ որքան պէտք է նպաստի դիմումնագիրը գնահատելու: Բացի այն պարագաներէն երբ օրէնքը կը հաստատէ թէ այլ ժամկետներ պէտք է յարգուին: Որոշ տեղեկութիւններ (օրինակ՝ անուն, դիմումի թուական, նպաստի պայմաններ եւ ժամկետներ, ինչպէս նաեւ այլ անձնական տուեալներ որոնք առկայ են ծրագիրին աշխատանքներուն եւ կամ վերջնական հրատարակութիւններուն մէջ) ընդմիջտ պիտի պահուին ԳԿՀ-ի կողմէ, որպէսզի համատեղուին նմանատիպ տեղեկութիւններու հետ, իրենց համապատասխան մշակութային պարունակին մէջ:

Որեւէ ժամանակ, անհատը կրնայ խնդրել որ իր անձնական տուեալներու գործածութեան համար իր տուած հաւանութիւնը չեղեալ համարուի: ասիկա կարելի պիտի ըլլայ ընել առկայ օրէնսդրութեան համաձայն, եւ իր անդրադարձը պիտի չունենայ տուեալներու գործածութեան վրայ որ հիմնուած էր նախապէս տրուած հաւանութեան վրայ: Հաւանութեան չեղարկումը կը նշանակէ թէ ԳԿՀ-ն չի կրնար անձնական տուեալները գործածել այն նպատակով որուն գործածութեան շուրջ նախապէս հաւանութիւն ուներ: ասիկա իր հերթին կը նշանակէ թէ անհատին դիմումնագիրը այլեւս ի գորու չէ:

Առկայ օրէնսդրութեան համաձայն, տուեալներու գործածութեան հսկիչ մարմինը կ'երաշխաւորէ որ անհատը կարենայ իր տուեալներուն հասնիլ, կամ խնդրել որ իր անձնական տուեալները ստուգուին, սրբագրուին, կամ ջնջուին, ինչպէս նաեւ սահմանափակուին:

Տուեալներու գործածութեան հսկիչ մարմինը կ'երաշխաւորէ որ պէտք եղած ապահովական եւ ճշգրիտ միջոցները պիտի կիրարկուին անհատին անձնական տուեալներուն գործածութեան ժամանակ՝ թէ՛ այն պարագային երբ տուեալները գործածուին այս մարմինին կողմէ, թէ՛ ալ երբ անոնք գործածուին այլ մարմիններու կողմէ, որոնց հետ համաձայնութիւն կը կնքուած է:

Տուեալ նպաստի դիմումնագիրը համակարգելու նպատակով, տուեալներու գործածութեան հսկիչ մարմինը կրնայ տուեալները գործածել ուղղակիօրէն եւ կամ գործակից մարմիններու միջոցով: այս վերջինս միայն կը պատահի այն պարագային երբ, ըստ օրէնքի, համապատասխան պայմանագիրներ կան այս գործակից մարմիններուն հետ:

Տուեալ նպաստի դիմումնագիրը համակարգելու ծիրին մէջ, ԳԿՀ-ն կրնայ անձնական տուեալները փոխանցել գործակից մարմիններու որպէսզի անոնք հրատարակուին եւ գործածուին կազմակերպութեան հաղորդակցութեան նկատառումներով: Այս գործակից մարմինները կրնան Եւրոպական Միութեան սահմաններուն մէջ գտնուիլ, կամ ըլլալ արտասահման: այս վերջինին պարագային, ըստ օրէնքի, համապատասխան ընթացակարգեր ի գործ պիտի դրուին տուեալներու պաշտպանութիւնը մշտապէս ապահովելու համար:

Անհատը կրնայ բողոքի հայց ներկայացնել Փորթուկալական Ազգային Իշխանութիւններուն (“Comissão Nacional de Proteção de Dados”), եթէ պատճառ մը ունի կարծելու թէ տուեալներու գործածութեան երկու հսկիչ մարմինները վերոնշեալ պայմանները չեն յարգած տուեալներու պաշտպանութեան մէջ: